


ԱՆԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, Столица армянских Багратидов – Ани в оценке иностранных арменоведов и путешественников, Ереван, изд. «Лусакн», 2024, 192 с.

1001 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ



Աշխատությունը բովանդակում է հայագիտությանը վաղուց ի վեր հուզող և մնայուն թեմա՝ լեգենդար Անի մայրաքաղաքի պատմությունն ու նրա ճակատագիրը: Դրան համապատասխան, հսկայական գրականություն է ստեղծվել Հայաստանի այդ ականավոր ուստանի, նրա պատմության ու մշակույթի վերաբերյալ, իսկ ինքը՝ քաղաքը, դարձել է իրեն ստեղծած ժողովրդի համար սրբազան մասունք և այդ նույն մասունքի իրավունքով՝ ոչ անվթար ու ոչ ամբողջական, ավերակված կոթողներով ու խոնարհված եկեղեցիներով, որոնք դարձել են հուշ և պատմություն՝ մեկը մյուսի հետ հավերժ մրցակցող իրենց փառահեղ անցյալի դրվագներով:

Գիտական շրջանառության մեջ վաղուց ի վեր մտած այս քաղաքի պատմությանը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ա. Դուլուխանյանը մոտեցել է յուրովի՝ հիմնահարցը քննարկելով հետաքրքիր դիտանկյունից՝ Անին օտարազգի հայագետների ու ճանապարհորդների հայեցակետից ու բնութագրմամբ, ինչպես և նրա պատմության անդրադարձներին՝ ազգային հոգևոր աշխարհում, ասել կուզի՝ հիշողության մեջ: Դրանով իսկ թեման բացահայտվում է նորովի և թարմ համայնապատկերի մեջ, որտեղ առկա են ոչ միայն Անիի ուսումնասիրության գիտական արդյունքները, այլև բնութագրվում են իրենք՝ քաղաքը հետազոտության առարկա դարձրած հայագետներն ու այցելու ճանապարհորդները՝ անկրկնելի անհատականությամբ ու սեփական ընկալումներով: Եվ այս իմաստով Բագրատունյաց մայրաքաղաքի կենսագրությունը վերարտադրվում է բոլորովին նոր կտրվածքով, քաղաքակրթության մեկնակետից՝ շարունակ հիշեցնելով մեզ, որ հայությունը ևս իր լուման է ներդրել այդ քաղաքակրթության զարգացման հանգրվաններում:

Հեղինակն իրեն հետաքրքրող հիմնահարցին մոտեցել է իր՝ որոշակիորեն ձևավորված ու կիրառած սկզբունքով, որ հետամտում է ցույց տալ խնդրո առարկա հայագետի կամ Անիի այցելուի անհատական մոտեցումը ավերված քաղաքի պատմությանը՝ նրա արտաքին տեսքին, ճարտարապետական հորին-

վածքին, հայ քաղաքական ու մշակութային կյանքում նրա ունեցած տեղին ու նշանակությանը, օտար նվաճողների կողմից նրա դեմ ուղղված շարունակական հարձակումներին և այլն: Եվ Ա. Դոլուխանյանին հաջողվել է ի հայտ բերել նրանցից յուրաքանչյուրի տեսակետն ու կարծիքը Անիի բազմաշերտ ու եզակի արվեստի, շքեղ անցյալի կամ ողբերգական զարգացումների մասին, որոնց ամբողջության մեջ էլ ամփոփվում է Անիի պատմությունն ու քաղաքամայրի իրավունքը՝ օտարագրիների (ինչպես նաև հայ ուսումնասիրողների և առհասարակ մտավորականների) անվրեպ գնահատանքով: Այդպիսին են հեղինակի գրեթե բոլոր լուսաբանումները՝ սկսած առաջին ճանապարհորդներից մեկի՝ դիվանագետ, գրող, Ալեքսանդր I-ի պալատական նկարիչ Ռ. Պորտերի մատիտանկար պատճենումներից, ֆրանսիացի ուղեգիր, ճարտարապետության պատմաբան Ա. Շուազիի ճշմարտացի արժևորումներից և վերջացրած Անիի եկեղեցիներին Լինչի հանգամանալի անդրադարձնելով և այլն: Նույնը վերաբերում է Ժ. դը Մորգանի, Վ. Աբիխի, Շ. Դիլի, Մ. Բրոսեի, Էդ. Դյուլորիեի, Ն. Մառի, Հ. Օրբելու և այլոց ստեղծած խոշոր և մնայուն վաստակին՝ անիագիտության բազմաձև հետազոտությունների ասպարեզում: Այստեղ հարկ է առանձնացնել Ա. Դոլուխանյանի՝ հատկապես ֆրանսիացի հայագետներին նվիրած էջերը՝ մեր քննարկման ենթակա հիմնահարցի շրջանակում, որտեղ առավել անկաշկանդ ի հայտ են բերված հեղինակի ընդարձակ իրազեկությունն ու ընդհանրացումները ֆրանսիացի հայագետներին գնահատելիս: Հիրավի, Անիի պատմության ուսումնասիրության ասպարեզում խոր հետք է թողել ֆրանսիացի ականավոր հայագետ, Ռուսաստանի և Եվրոպական մի շարք երկրների ակադեմիաների անդամ Մ. Բրոսեն, որը գրել է «Անիի ավերակները» երկհատոր աշխատությունը (1860-1861): Ա. Դոլուխանյանը վերհանում է նրա ուսումնասիրության գիտական կուռ հենքը, սկզբնաղբյուրները, պատմագիտական հարուստ տեղեկությունները մասնավորապես Բագրատունյաց Անիի պատմության շրջանակներում, X դարում Բագրատունիների զորացումը Աշոտ Բ-ի, Աբասի, Աշոտ Գ-ի և Սմբատ Բ-ի ժամանակ, քաղաքի ճարտարապետական արվեստի վերելքը թեկուզ և այն ցայտուն օրինակով, երբ Տրդատ ճարտարապետը հիմնում է Անիի կաթողիկե եկեղեցին (989): Նույն այն ճարտարապետը, որն այդ ժամանակներում (970-990-ական թթ.) կառուցել է Արգինայի կաթողիկե եկեղեցին, վերականգնել Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարի գմբեթը և այլն: Ա. Դոլուխանյանը վերհանում է Մ. Բրոսեի շարադրանքի կուռ գիտականությունը, այլև առանձնահատուկ նրբագեղությունը՝ գեղարվեստական ոճի առկայությունը նրա հիշյալ և այլ աշխատություններում: Մ. Բրոսեի այս հետազոտությունները գիտական ավարտուն տեսք են ստանում քաղաքի հատակագծերին կոթնող նրա եզրակացություններով, որոնք խորացնում են քաղաքի կառուցապատման աստիճանական զարգացման վերաբերյալ իր և այլոց նախորդ պատկերացումները: Կամ՝ ֆրանսիացի նշանավոր հայագետ Էդ. Դյուլորիեի գործունեության բացահայտումներն ու լուսաբանումները սույն աշխատության մեջ՝ ի դեպ, հայոց պետականության զարգացման խաչմերուկներում

Անիի պատմական նշանակության բացահայտումներով: Հատկանշական է էդ. Դյուլիսյանի «Հետազոտություններ հայկական տոմարական և պատմական ժամանակագրության» աշխատությանը տրված բարձր գնահատականը, որտեղ արժևորվում են ֆրանսիացի հայագետի ճշգրտումները հայ մատենագիրների ժամանակագրական տեղեկությունների կտրվածքով:

Հիմնահարցի տրամաբանությամբ ևս և երբեմն այն ամբողջականացնելու մղումով՝ Ա. Դյուլիսյանը դիմում է ընդմիջարկումների. նկատի առնելով այն, որ հայերն ապրում են իրենց հայրենիքում, որպես տեղաբնիկ և վաղնջական ժամանակներից, նա գրում է, որ Բագրատունիներն իրենց համարում էին Նոյի շառավիղները՝ գիտակցելով իրենց պատմական արմատները: Եվ հակառակ այս վերջինի, մերօրյա կեղծարար թուրքական պատմագիտությունը նենգափոխում է և՛ փաստերը, և՛ ժամանակաշրջանները: Նա անդրադառնում է այն իրողությանը, որ սելջուկ թուրքերը փոքրասիական թերակղզու հյուսիսարևմտյան մասում, որտեղ գտնվում էր Տրոյան (Եփեսոսի մոտ), հայտնվել են XIII դ. վերջին քառորդին, մինչդեռ Թուրքիայի երբեմնի նախագահ Թ. Օզալը Հարվարդի համալսարանում իր հանդիպումներից մեկում պնդում էր, որ տրոյացիները, ոչ ավել, ոչ պակաս, եղել են իրենց նախահայրերը (էջ 56): Օզալը, այդպիսով, պատմությունը հանձնում էր քաղաքականության կամ սեփական քմահաճությամբ, ճիշտ նույն կերպ, երբ մեկ այլ առիթով փորձում էր Օսմանյան կայսրության պատմության մեջ խայտառակ դեր կատարած ենիջերիններին ներկայացնել որպես նմանակության իդեալ՝ հպատակ ազգերի համար, որոնք իբր ձգտում էին անգամ կաշառքի միջոցով իրենց երեխաներին ենիջերիների զորախումբ մտցնել (տե՛ս Vryonis S. The Turkish State and History, New York, 1993, p. 46):

Անիի պատմության գիտական վերարտադրության գործում անդրադառնալով Մ. Բրոսեի լուրջ ներդրումներին՝ աշխատության հեղինակն ուրվագծում է քաղաքի ողբերգական ճակատագիրը պայմանավորող գործոնները՝ թշնամական պետությունների ճնշումների ուժգնացումը XI դարում, բյուզանդացիների ներխուժումը Հայաստան, որի կործանումը, սակայն, հետաձգվում է սպարապետ Վահրամի հերոսական մարտերի շնորհիվ: Եվ դարձյալ, արդիական իմաստ ու հնչեղություն են ստանում Մ. Բրոսեի հեղինակային այն բացահայտումները, որոնք հասկանալի են դարձնում Անիի անշքացման այլ պատճառները՝ հայ իշխանների ներքին անմիաբանությունը, հայրենասիրության զգացման աղետալի նվազումը, որոնք չէին կարող փոխհատուցվել Բագրատունյաց երիտասարդ արքա Գագիկի ժամանակավոր հաջողություններով, այդ թվում և 1042 թ. թուրքմեն-սելջուկների, իսկ 1043 թ. բյուզանդացիների դեմ տարած հաղթանակով: Այժմեական են հնչում Ա. Դյուլիսյանի հղումները Մ. Բրոսեին՝ «երբ չկա համաձայնություն, ապա երկնային ուժը նույնպես մնում է անզոր» (էջ 71): Հիրավի, պատմությունը կրկնվում է այն ժամանակ, երբ մարդիկ իրենք են կրկնում իրենց սխալները՝ անտեսելով պատմության դասերը, և այս դառն ճշմարտությունը, այդ թվում և անկումային մտածելակերպն ու հոգեբանական պարտադրանքը անխուսափելիորեն հասցնում են թշնամու ողորմածությանը

հանձնվելուն, պետականության ու հայրենիքի կորստին: Վեստ Սարգսին ու Պետրոս կաթողիկոսին «հաջողվում է համոզել իշխաններին՝ Մոնոմախին հանձնել Անին, որպեսզի վերջինս իրենց պաշտպանի թշնամիներից», եզրափակում է հեղինակը (էջ 73): Ահա և այսօր վերստին զարմանալիորեն նոր կյանք առած և կործանարար այդ սխալի ձևակերպումը ավերակյալ քաղաքի պարիսպների ներսում: Ահա և դրա անխուսափելի հետևանքները՝ 1045 թ. Անի անձնատվությունը, նրա բնակչության չղադարող գաղթերը Լեհաստան և Մոլդովա, հետագայում՝ Աստրախան, Սիս, Ջուղա, Թեոդոսիա, Վան և այլուր: Աշխատության մեջ Մ. Բրոսեի հետազոտությունները բնութագրվում են այն կարևոր ընդհանրացմամբ, որ նա Անիի ծավալուն պատմության առաջին հեղինակն է, որը, գործակցելով Վենետիկի Մխիթարյանների հետ, դրեց Անիի հետագա ուսումնասիրությունների հաստատուն հիմքերը:

Առանձին հետազոտողների շարքն այս գլխում Ա. Դյուլխանյանը եզրափակում է Նիկողայոս Մառի՝ որպես Անիի պատմության ներհուն ուսումնասիրողի ծավալուն գնահատականով: Ամենայն իրավամբ, աշխատության մեջ Ն. Մառը հանդես է գալիս Անիի պատմության նոր փուլը բացահայտողի գիտական շողարձակումներով, իբրև բացառիկ հետազոտող հնագետ: Դրա համեմատ, հեղինակն Անիի մասին իրողություններն ու տվյալները ընթերցողին է հաղորդում այս գիտնականի հետաքրքրությունների շրջանակներում՝ միշտ ուշադրության կենտրոնում պահելով Անիի մշակույթը, հատկապես ճարտարապետությունը: Ա. Դյուլխանյանն ընդգծում է Ն. Մառի հանգամանալի և խորքային իմացությունը մեր ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքում Անիի դերակատարության հիմնահարցերում, որով և այդ հետազոտողի գործը հանդես է գալիս որպես գիտական մտքի հանրագումար՝ նախորդ և իր ժամանակի բոլոր հետազոտություններով հանդերձ: Ուշագրավ է խնդրո առարկա աշխատության մեջ Ն. Մառի այն եզրակացության առանձնացումը, որ Անին իր բնակչության էթնիկական միատարրության իմաստով եղել է բացառապես հայկական քաղաք՝ իր արքայական նստավայրով, քաղաքական ու տնտեսական գործառույթներով ու հոգևոր նշանակալիությամբ: Այս խնդիրներին հեղինակի քննական մոտեցումները ամրապնդվում են նրա այն լուսաբանումներով, որոնք վերաբերում են Ն. Մառի՝ որպես Անիի պեղումները նախաձեռնողի և կազմակերպչի գործունեությանը՝ 1892-1916 թթ. ընթացքում: Իսկապես Անիի պատմության ուսումնասիրության գործում հանրագումարային նշանակություն ունի Մառի գիրքը, որտեղ նա ներկայացնում է իր հնագիտական տասներկու արշավների արդյունքները՝ համապատասխան գտածոների հիման վրա, որպիսիք և հիմք դարձան Ն. Մառի համար՝ բուն իսկ պեղումների հարթակում ստեղծելու հնագիտական թանգարան և դրանով իսկ հավելյալ ու համոզիչ ցուցադրական միջոց՝ հայերի պատմության ու մշակույթի վրա բևեռելու ժամանակի գիտական հասարակայնության ուշադրությունը: Այստեղ ևս հեղինակային շեղումներն ինքնանպատակ չեն և օժտում են նրա աշխատանքը մերօրյա տրամադրություններով, ինչպես, օրինակ, 1215 թ. կառուցված Տիգրան Հոնենցի եկեղեցու որմ-

նանկարների ոչնչացումը թուրք բարբարոսների կողմից, որի մասին գրում էր Վիկտոր Լանգլուան Նապոլեոն կայսրին՝ 1852-1853 թթ. (էջ 102): Հայաստանի տարածքում բոլոր հին և նոր բարբարոսների այս վարքագիծն ու գործելակերպը դույզն-ինչ չափով չի փոխվել. դեռևս Վ. Լանգլուան, ինչպես նկատում է հեղինակը, ահազանգ էր հնչեցնում, որ «թուրքերը ոչնչացնում են հայկական պատմական հուշարձանները, որովհետև դրանք հիշեցնում են իրենց երբեմնի տերերի մասին» (էջ 102): Բայց այն, ինչ գրվել է գրչով, չես կարող ջնջել կացնով, ասում է հին իմաստությունը, որի ճշմարտացիությունը հեղինակը մեկ անգամ ևս հաստատում է «Անի քաղաքը ռուսալեզու և այլալեզու հանրագիտարաններում» վերնագրով տեղեկատու-վերլուծական ակնարկում, որտեղ հիշվում են համբավավոր ու միջազգային հեղինակություն վայելող հանրագիտական հրատարակությունները:

Աշխատության 2-րդ գլխում գնահատվում են Անիի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրներն ու լեգենդար մայրաքաղաքի մասին պատմիչների գործերն ու հայ մտավորականների, այդ թվում և ստեղծագործական մտավորականության անդրադարձները: Հեղինակն արժանին է հատուցում այս ասպարեզում հայ դասական Խ. Աբովյանի առանցքային դերակատարությունը՝ Անիի ազգային ու մշակութային նշանակության տեսակետից և նկատի ունենալով նրա հանրահայտ վեպում հայկական պետականությանը տրված բարձր գնահատականը: Սրա հետ միասին՝ նրա քննադատական հիմնավոր տեսակետը մեր այն նախնիների մասին, որոնք չկարողացան պահպանել երկրի քաղաքական անկախությունը՝ Անի մայրաքաղաքով հանդերձ: Իր ուղեգրական հայտնի շարադրանքում, որ ընդգրկում է Անի կատարած այցի ընթացքում տպավորություններն ու պատմագիտական խորհրդածությունները, բացահայտվում են Աբովյանի՝ խորապես հայրենասիրական ու առաջադիմական տեսակետները Անիի և Բագրատունյաց հարստության անկման, դրանց պատճառների և իր ժամանակի հայության քաղաքական ու հոգևոր կացության վերաբերյալ:

Անիի պատմության և առհասարակ դրա վերաբերյալ սկզբնաղբյուրների վկայակոչումով (Եղիշեից ու Ղազար Փարպեցուց մինչև ժամանակակիցներ Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի, Սամվել Անեցի և ապա Մատթեոս Ուռ-հայեցի, Կիրակոս Գանձակեցի և այլք) հեղինակը հիմնավորում է անիագիտության գիտական ճշմարտացիությունը, ինչպես նաև այն անառարկելի իրողությունը, որ օտար հայագետների ու ճանապարհորդների ընդհանրացումներն ու հաղորդած հարուստ տեղեկատվությունը հենվում են աղբյուրագիտական հավաստի և արժանահավատ տվյալների վրա:

Քննարկվող գլխում ևս հեղինակը կատարել է թեման բնութագրող ինքնատիպ բացահայտումներ. հատկապես նկատի ունենք շարադրանքի վերջին հատվածներից մեկը, որտեղ նա բացահայտում է Անիի թողած խոր հետքերն ու հմայքը հայ պատմագետների, գրողների և առհասարակ մտավորականության աշխատություններում և գործունեության, ասել կուզի՝ հայ մտավոր և հոգևոր բազմաձև աշխարհում:

Կարելի էր ավելի ընդարձակ խոսել այս աշխատության արժանիքների և մեր պատմաբանասիրական գիտության համար դրա կարևոր արժեքի և նշանակության մասին՝ անպայման հավելելով, որ Ա. Դոլուխանյանի ուսումնասիրության ռուսերեն թարգմանությունն ամենայն հաջողությամբ իրականացրել է ռուսերենի ճանաչված գիտակ և թարգմանչուհի Գայանե Հարությունյանը: Ուշադրություն են բևեռում Անիին նվիրված՝ պատմագեղարվեստական բնույթի նրա ճաշակավոր (Ներսես Շնորհալի, Հովհաննես Շիրազ, Լևոն Մանվելյան) և առաջին անգամ արված բնագրային թարգմանությունները, որոնք, կարծում ենք, ռուսալեզու ընթերցողին ճիշտ չափի մեջ են փոխանցում վերոհիշյալ հեղինակների էլեգիական ազնիվ տրամադրությունները:

Ունեմ մի երկու դիտողություն, երկուսն էլ՝ տեխնիկական բնույթի: Նախ, կրկնվել է Անիին վերաբերող՝ Հովհ. Շիրազի հայտնի բանաստեղծության թարգմանությունը (երկրորդ անգամ՝ ոչ լրիվ ծավալով, տե՛ս էջ 138 և 146): Այնուհետև, երկրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ Աբովյան-Անի առնչությունների շուրջ, կարծում եմ, իր տեղում չէ, և թերևս, իր տեղը պետք է զիջեր, ըստ հերթականության, Անիի պատմությունը, դրա սկզբնաղբյուրները, պատմագիտությունը և այլնը ներկայացնող երկրորդ ենթագլխին: Մանավանդ, Խ. Աբովյանը միջնորդավորումով է կապվում հիմնահարցին (օտարագգի գիտնականների հետ նրա նամակագրությունը) և այլազգի հայագետ կամ ճանապարհորդ չէ:

Ասվածը, սակայն, հետին նշանակություն ունի գիտական այն ակնառու և ամբողջացնող որակների համեմատությամբ, որով աչքի է ընկնում այս աշխատությունը Անիի և նրա պատմության վերաբերյալ հետազոտությունների շարքում, և որի շնորհիվ մեր առջև ավերակներից վերստին հառնում է 1001 եկեղեցիների վեհաշուք քաղաքը՝ հայոց պատմության հոլովույթում:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր
info@haygithimnadram.am